NASDAQ OMX

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ ՈՐՈՇՈՒՄ

10 հունիսի 2016 թվականի N ՑԲ-002-06/16

ք. Երևան

«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԱԲԱՇԽՎԱԾ 22,704,347 ՍՈՎՈՐԱԿԱՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԸ ՑՈՒՑԱԿԵԼՈՒ ԵՎ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ (Բ) ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «ՅՈՒՆԻԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետև՝ Ընկերություն) 2016 թվականի ապրիլի 26-ի հայտը 100 (հարյուր) ՀՀ դրամ անվանական արժեքով, 22,704,347 (քսաներկու միլիոն յոթ հարյուր չորս հազար երեք հարյուր քառասունյոթ) հատ լրացուցիչ տեղաբաշխված սովորական անվանական բաժնետոմսերը ցուցակելու և բաժնետոմսերի երկրորդային (Բ) ցուցակում ընդգրկելու վերաբերյալ, ինչպես նաև «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» Բաց բաժնետիրական ընկերության (այսուհետև՝ Օպերատոր) դիտորդ խորհրդի հավանությունը և Ցուցակման հանձնաժողովի կողմից 2016 թվականի հունիսի 9-ին ներկայացված եզրակացությունը,

Ղեկավարվելով Օպերատորի «Արժեթղթերի ցուցակման և առևտրին թույլատրման կանոնների» 10-րդ գլխի 52 կետով և Օպերատորի կանոնադրության 9-րդ գլխի 9.59) կետի զ) ենթակետով, Գլխավոր տնօրենը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ-ի 100 (հարյուր) ՀՀ դրամ անվանական արժեքով, 22,704,347 (քսաներկու միլիոն յոթ հարյուր չորս հազար երեք հարյուր քառասունյոթ) հատ լրացուցիչ տեղաբաշխված սովորական անվանական բաժնետոմսերը ցուցակել և ընդգրկել բաժնետոմսերի երկրորդային (Բ) ցուցակում, ինչպես նաև թույլատրել դրանցով հասցեական և ռեպո գործարքների կնքումը:
2. Սահմանել, որ Ընկերության ընդհանուր քանակով 132,373,818 (մեկ հարյուր երեսուներկու միլիոն երեք հարյուր յոթանասուներեք հազար ութ հարյուր տասնութ) հատ սովորական անվանական բաժնետոմսերը ցուցակվում եմ բաժնետոմսերի երկրորդային (Բ) ցուցակում այն պայմանով, որ Ընկերությունը ամենաուշը մինչև 30.12.2016թ. և դրանից հետո կապահովի «Արժեթղթերի ցուցակման և առևտրին թույլատրման կանոններ»-ի 52-րդ կետի 3)-րդ ենթակետով սահմանված պահանջը, հակառակ դեպքում Ընկերության բաժնետոմսերը կապացուցակվեն՝ դրանք տեղափոխելով Ազատ շուկա կամ առանց դրա:
3. Հանձնարարել «Բորսայական ծառայությունների դեպարտամենտ»-ին՝ սույն որոշման ընդունման օրվանից մեկ աշխատանքային օրվա ընթացքում, որոշման մեկ օրինակն ուղարկել Ընկերությանը և որոշման մասին տեղեկություններ հրապարակել Օպերատորի առևտրային համակարգի և ինտերնետային կայքի միջոցով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2016 թվականի հունիսի 15-ին:

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ ԿՈՆՍՏԱՆՏԻՆ ՍԱՐՈՅԱՆ

«ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ • ՀՀ, Երևան 0010, Միհր Մկրտչյան 5բ • www.nasdaqomx.am
հեռ.՝ +374 10 543 321 • ֆաքս՝ +374 10 543 321 լր 135 • էլ. փոստ՝ info@nasdaqomx.am